ՈՐՈՇՈՒՄ
Կատարողական վարույթը կասեցնելու մասին

10.05.2022թ . ք. Երևան

Հարկադիր կատարումն ապահովող ծառայության Երևան քաղաքի Աջափնյակ, Դավթաշեն և Արաբկիր բաժնի ավագ հարկադիր կատարող արդարադատության մայոր Մուշեղ Ղահրամանյանս, ուսումնասիրելով թիվ 04024412, 08074901 և 05776315 կատարողական վարույթների նյութերը

ՊԱՐԶԵՑԻ

ՀՀ Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի կողմից 03.05.2021թ. տրված թիվ ԵԱԴԴ/4312/02/17 և ԵԱԴԴ/4312/02/17 կատարողական թերթերի համաձայն պետք է Անահիտ Կնյազյանից հօգուտ «Յունիբանկ» ՓԲԸ-ի բռնագանձել 878945 ՀՀ դրամ և հաշվեգրվող տոկոսներ:

ՀՀ Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի կողմից 03.05.2021թ. տրված թիվ ԵԱԴԴ/24229/02/20 կատարողական թերթի համաձայն պետք է Անահիտ Կնյազյանից հօգուտ «Կոնյինբանկ» ՓԲԸ-ի բռնագանձել 969.540 ՀՀ դրամ և հաշվեգրվող տոկոսներ:

27.04.2022թ-ին «Յունիբանկ» ՓԲԸ-ի կողմից Ծառայություն է ներկայացվել գրություն, համաձայն որի՝ ԵԱԴԴ/4312/02/17 և ԵԱԴԴ/4312/02/17 կատարողական թերթերով բռնագանձման ենթակա գումարը կազմում է 7.464.408 ՀՀ դրամ:

Կատարողական գործողությունների ընթացքում պարզվել է, որ գույքի բռնագանձման վերաբերյալ վճռի հարկադիր կատարման ընթացքում պարտապանի ողջ գույքի վրա բռնագանձում տարածելու պարագայում գույքը օրենքով սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհազարապատիկի և ավելի չափով բավարար չէ պարտատիրոջ (պահանջատերերի) հանդեպ պարտավորությունների ամբողջական կատարումն ապահովելու համար կամ դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության որևէ կատարողական վարույթով (վարույթներով) պարտատիրոջ (պահանջատիրոջ) պահանջը բավարարելու դեպքում գույքի օրենքով սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհազարապատիկի և ավելի չափով անբավարարության դեպքում անհնարին կդառնա այդ կամ այլ կատարողական վարույթով (վարույթներով) որևէ այլ պարտատիրոջ (պահանջատիրոջ) հանդեպ պարտավորությունների ամբողջական կատարումը:

Կրոգրյալի հիման վրա և ղեկավարվելով «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 28, 28.1 հոդվածներով և 37 հոդվածի 8-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Կասեցնել թիվ 04024412, 08074901 և 05776315 կատարողական վարույթները 90օրյա ժամկետով, վերջնաժամկետ սահմանելով 08.08.2022թ:

Որոշման պատճեն ուղարկել կողմերին:

Որոշումը կարող է բողոքարկվել վերադասության կարգով որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից տասն՝ երկամսյա ժամկետում, կամ վարչական դատարան՝ օրենքով սահմանված ժամկետներում:

«Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 28 հոդվածի 5-րդ մասի համաձայն հարկադիր կատարողի որոշման բողոքարկումը չի կասեցնում կատարողական գործողությունները:

ԱՎԱԳ ՀԱՐԿԱԴԻՐ ԿԱՏԱՐՈՂ
ԱՐԱԲԿԻՐԻ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՄԱՅՈՐ Մ. ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆ